ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 2/1
info@teachforarmenia.org
(+374) 60 505 - 515
www.teachforarmenia.org

Հարգելի գործընկեր,

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կրթական հիմնադրամի նպատակն է Հայաստանի և Արցախի բոլոր երեխաներին՝ անկախ նրանց գտնվելու վայրից ու սոցիալական պայմաններից, ապահովել հավասար ու որակյալ կրթությամբ: Հիմնադրամը արդեն մոտ տաս տարի է, ինչ վերապատրաստում է երիտասարդ և կայացած մասնագետների և երկու տարով գործուղում նրանց Հայաստանի և Արցախի ամենատարբեր համայնքներ՝ լրացնելու տեղի դպրոցների ուսուցիչների պակասը: Այս պահին ծրագրում են ներգրավված ավելի քանի 200 ուսուցիչներ՝ մոտ 150 համայնքներում:

Ստորև կարող եք ծանոթանալ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի կողմից գործող ուսուցիչների համար իրականացվող ծրագրի մանրամասներին: Ծրագրի նպատակն է ընտրել ներկայումս դպրոցներում դասավանդող լավագույն մասնագետներին, վերապատրաստել նրանց, զարգացնել հմտությունները, ծանոթացնել դասավանդման նոր մեթոդների հետ եւ խրախուսել նրանց մնալ սեփական համայնքում՝ ապահովելով կայուն զարգացում մարզային համայնքներում:

Ծրագրին կարող են մասնակցել այն ուսուցիչները, ովքեր ներկայումս դասավանդում են **առնվազն 40 աշակերտի Շիրակի, Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում** կամ **առնվազն 20 աշակերտի Արցախի Հանրապետությունում:**

Ծրագրին մասնակցելու համար ուսուցիչը պետք է բավարարի ստորև նշված պայմաններին՝

- Ունենա մանկավարժի որակավորում եւ դասավանդվող առարկային համապատասխան մասնագիտացում,
- Ներկայումս դասավանդվող ժամերի քանակը լինի 11 եւ ավելին,
- Ունենա նույն դպրոցում ծրագրի ավարտից հետո առնվազն երկու տարի մնալու հանձնառություն

Ծրագրին կարող ենք մասնակցել այն ուսուցիչները, ովքեր դպրոցում հանրակրթական դպրոցում դասավանդում են

- Մաթեմատիկա,
- Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն,

ԴԱՍԱՎԱՆԴԻՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ, ք. Երևան, Մելիք-Ադամյան 2/1
info@teachforarmenia.org
(+374) 60 505 - 515
www.teachforarmenia.org

- Ինֆորմատիկա,
- Ֆիզկուլտուրա,
- Անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն,
- Հայոց լեզու եւ գրականություն,
- Պատմություն,
- Տարրական մանկավարժություն

(դասվար, ովքեր 2023 թ. սեպտեմբերին դասավանդելու են 2-րդ կամ 3-րդ դասարանում)

Ծրագրին միանալով դուք հնարավորություն կստանաք

- Զարգացնել սեփական համայնքները,
- Գրանցել մասնագիտական աճ,
- Նորարար մտքեր եւ նախագծեր իրականացնելու ռեսուրսներ,
- Դրամական օժանդակություն (ՀՀ-ում 70,000 դրամ, ԱՀ-ում 100,000 դրամ),
- Առաջնորդական հմտությունները զարգացնելու հնարավորություն,
- Մշտապես աշխատել և ստեղծագործել գաղափարակից անհատների հետ:

Ծրագրի մանրամասներին և դիմելու կարգին առավել մանրամասն կարող եք ծանոթանալ <u>այս հղումով</u>: